ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

1. Բարձր լայնություններում տարածվող բուսականությունը հարմարվել է օրվա լուսավոր ժամանակահատվածի տևողությանը: Հասարակածին ավելի մոտ գտնվող լայնությունների բուսականությունը հարմարվել են օրվա համեմատաբար կարճ լուսավոր ժամանակահատվածին: Օրվա լուսավոր ժամանակահատվածի ավելի երկար տևողությունը դրանց մոտ կարող է պատճառ դառալ պտուղների բացակայությանը:

2. Մեկուսացումը արտաքին աշխարհից կազդի բույսերի և հատկապես կաթնասուն կենդանիների տեսակային կազմի վրա. նրանք կղզու պաշարների սահմանափակության պատճառով չեն կարող գոյատևել:

3. Հողում խոնավության աստիճանի բարձրացումը կձևավորի խոնավ բուսականության համակեցություն, իսկ խոնավության ավելցուկի պայմաններում կվերաճի ճահճային համակեցության: Գրունտային ջրերի մակարդակի բարձրացումը կհանգեցնի հողում առկա աղերի թափանցումը հողի մակերևույթ, որի հետևանքով կարող է դիտվել հողի կրկնակի աղակալում:

4. Բարեխառն գոտու բույսերը ունեն ընդգծված սեզոնայնություն (տերևաթափություն) և ձմեռային ամիսներին սենյակային պայմաններում դրանց աճը կանգ է առնում:

5. Խոշոր կաթնասունները:

6. Արևադարձային գոտում գտնվողները: Այստեղ արևի ճառագայթային էներգիան Երկրի մակերևույթի վրա ավելի մեծ է:

7. Կատարվում է էներգիայի կուտակում օրգանական նյութերի ձևով: Օրինակ՝ ճահճային էկոհամակարգերում կուտակվում է տորֆի, իսկ անտառայիններում՝ փայտանյութի ձևով: Ռեդուցենտների բացակայության արդյունքում են ձևավորվել քարածխի պաշարները:

8. Բոլոր զարգացող էկոհամակարգերում տեղի է ունենում էներգիայի կու-

տակում:

9. Եթե կենսազանգվածի կուտակման և սպառման արագությունը միաչափ է: Իրականում այն անհնարին է, քանի որ էկոհամակարգի կայունությունը պայմանավորված է դինամիկ հավասարակշռությամբ, այսինքն կենսազանգվածի առաջացման և սպառման որոշակի տատանումներով և կուտակման մակարդակով:

10. Կենսազանգվածի հաստատուն աճը ուղիղ համեմատական է պրոդուցենտների կենսազանգվածի փոփոխությանը:

11. Անտառային համակեցությունները ջրայինների համեմատ ավելի արդյունավետ են, քանի որ դրանցում արեգակնային ճառագայթային էներգիան ավելի լիարժեք է իրացվում, իսկ ջրային միջավայրում լույսը վատ է թափանցում:

12. Այն էներգիան, որը չի կլանվել բույսերի կողմից նպաստում է շրջակայքի տաքացմանը և ազդում է էկոհամակարգի ձևավորման վրա: Բոլորիս հայտնի է, որ ցածր ջերմաստիճանի պայմաններում պրոդուցենտները կենսազանգված չեն ձևավորում, օրինակ ձմռանը:

13. Մարդու ազդեցությունը առավել նկատելի է տունդրայի էկոհամակարգի համակեցություններում:

14. Լեռնային արոտավայրերի մարդածին ձևափոխումները կհանգեցնեն հողերի անապատացմանը:

15. Հողմային և ջրային էրոզիային նպաստում են անտառածածկի նվազումը, գերարածեցումը, անկառավարելի զբոսաշրջությունը, գրունտային ճանապարհների ավելացումը, ճմաշերտի քայքայումը, հողերի խոր վարը:

16. Ցնցումը: